

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 180-Ա


8 հուլիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 15-ի N 1621-Ա, N 1623-Ա, N 1631-Ա, 2020 թվականի հուլիսի 1-ի N 1779-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 7-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
 - 1) «Աննա Ավետիսյան» Ա/Ձ՝ ք. Սիսիան, Շիրվանզադե 2.
 - 2) «Կարինե Զախարյան» Ա/Ձ՝ ք. Սիսիան, Շիրվանզադե 10/12.
 - 3) «Միեր Դավթյան» Ա/Ձ՝ ք. Կապան, Հ. Ավետիսյան 6
 - 4) «Աստղիկ Ղազարյան» Ա/Ձ՝ ք. Սևան, Նաիրյան 139/1.
 - 5) «Քնարիկ Վարդանյան» Ա/Ձ՝ ք. Սևան, Նաիրյան 139/45:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 08/07/20 11:44:49 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ